

«ՆԱՀՉ ԱԼ-ԲԱԼԱԳԱՆ» ՈՐՊԵՍ 10-ՐԳ ԳԱՐԻ ՇԻԱ ԻՍԼԱՄԻ ԿՐՈՆԱԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Բանալի բառեր. Նահչ ալ-Բալադա, Ալի իբն Աբի Տալիբ, ալ-Շարիֆ ալ-Ռադի, շիա խալսա, Բուհիներ:

Nahğ al-balāğā-ն² (այսուհետ՝ Նահչ ալ-Բալադա, թարգմ. Ճարտասանության ուղին/արվեստը)³ ուղղահավաստ չորրորդ խալիֆ և շիա առաջին իմամ Ալի իբն Աբի Տալիբի (մահ. 661 թ.) խուտբաների՝ (թվով 241 քարոզ, ճառ, հրահանգ), ուղերձ-նամակների (79) և ասույթների (480) մի ընտրանի ժողովածու է⁴:

Ալի իբն Աբի Տալիբին պատկանող նյութը բանավոր երկարատև փուլ է անցել. ժողովրդական բանահյուսության մեջ բանավոր խոսքից գրավոր անցման փուլում այն հատվածաբար գրի է առնվել և արդեն 10-րդ դարում՝ միջնադարյան հայտնի գրականագետ, բաղդադյան միջավայրի հայտնի բանաստեղծ և շիա գրող ալ-Շարիֆ ալ-Ռադին (970-1015/16 թթ.), ճարտասանությունը, որպես հավաքագրման հիմք համարելով, մեկ աշխատության մեջ է ներառել:

Նահչ ալ-Բալադան, որպես իմամ Ալիին պատկանող մի ժողովածու մեծագույն նշանակություն ունի մուսուլմանների համար և հատկապես շիաների համար: Այնպես ինչպես Ղուրանը Մուհամմադ մարգարեի ժամանակաշրջանում Աստծո կողմից իջեցված հայտնությունների երկրային հավաքածուն է, այդպես էլ շիայականության համար իմամության համատեքստում Նահչ ալ-Բալադան առաջին իմամի կողմից աստվածային հայտնության «մեկնության» երկրային մի հավաքածու է:

¹ ԵՊՀ Արաբագիտության ամբիոնի հայցորդ, էլ. փոստ՝ tmkrtyan@ysu.am
² Մեր ուսումնասիրության ընթացքում օգտվել ենք Նահչ ալ-բալադայի հետևյալ հրատարակությունից (այսուհետ՝ Նահչ ալ-բալադա) 2004 , نهج البلاغة
³ Արաբերենից nahğ (նահչ) թարգմանաբար նշանակում է՝ 1) ուղի, ճանապարհ, 2) մեթոդ, միջոց, 3) արվեստ, իսկ balāğā (բալադա)՝ 1) հոժետորություն, ճարտասանություն: Բացի ba-lu-gā (արաբերեն՝ ճարտասան լինել) բայից կազմված ճարտասանություն, հոժետորություն իմաստից՝ կա նա նաև ba-la-gā (արաբերեն՝ հասնել) բայի արմատից կազմված մեկ այլ՝ անվանական իմաստով նշանակություն, այն է՝ ցանկության իրագործում կամ հասնելը վերջնանպատակին (խոսքի ճարտասանության միջոցով):
⁴ Նահչ ալ-բալադայի տարբեր հրատարակություններում այս երեք բաժիններում ընդգկված քարոզ-ուղերձների թիվը տատանվում է 238-241, ուղերձ-նամակների թիվը՝ 77-79, իսկ ասույթների թիվը՝ 463-489:

Պատահական չէ, որ Ալի իբն Աբի Տալիբին պատկանող ժառանգությունն իր գրավոր ձևակերպումը մեկ ամբողջական աշխատության մեջ ստանում է շիա իսլամի գաղափարախոսության ջատագովների ընտանիքից ալ-Շարիֆ⁵ ալ-Ռադիի կողմից և Բուխների (945-1055 թթ.) գերիշխանության փուլում, որը գիտական գրականության մեջ հայտնի է որպես «շիա իսլամի դարաշրջան» և/կամ «իսլամական վերածննդի»⁶ նաև «իրանական ինտերմեցցոյի»⁷ դարաշրջան, որն էլ շիա իսլամի գաղափարախոսական աշխատություններ ստեղծելու, իրենց նախնիների ժառանգությունը գրավոր դարձնելու և հետագա սերունդներին թողնելու ամենանպաստավոր ժամանակաշրջանն ու փուլն էր համարվում: Այս ժամանակահատվածի կարևորությունը ոչ միայն քաղաքական, տնտեսական, հասարակական, այլև մասնավորապես կրոնադավանաբանական իրադարձությունների տեսանկյունից է ներկայացվում: Տվյալ ժամանակաշրջանին բնորոշ առանձնահատկություններից է եղել մշակութային ծաղկման համար հանդուրժողականությունը, որը ոչ միայն շիա իսլամի, այլև բոլոր կրոնական, գաղափարական ուղղությունների և հոսանքների միջև բանավիճային հարուստ նյութ ստեղծելու նախադրյալներ էր ստեղծում⁸:

Նաև չ ալ-Բալադան աղբյուրագիտական ուսումնասիրության տեսանկյունից արժեքավոր է ոչ միայն պատմաքաղաքական, մշակութային, հասարակական իրադարձությունների համատեքստում, այլև շիա իսլամի աստվածաբանական, կրոնափիլիսոփայական հասկացությունների գաղափարական ուղղությունների համատեքստում: Այն նաև հետաքրքրական է ժամանակագրական երկարատևության հանգամանքով, քանի որ Ալի իբն Աբի Տալիբի կենդանության օրոք ստեղծված տեքստի (բանավոր փուլի)՝ իսլամի սկզբնավորման շրջանից մինչև հավաքագրման շրջան՝ Բուխների գերիշխանության փուլի (945-1055 թթ.) աղբյուրագիտական նյութ է պարունակում: Ուստի Ալիից մինչև կազմող-հեղինակի միջև ընկած ժամանակաշրջանում պատմական, քաղաքական, մշակութային, կրոնական և գիտական բնագավառներում տեղի ունեցած իրադարձությունների քննարկումն անհրաժեշտ է Նաև չ

⁵ Ի դեպ շարիֆ անվանում էին նրանց, ովքեր և՛ հոր, և՛ մոր կողմից Մուհամմադ Մարգարեի ժառանգորդներ էին համարվում:

⁶ Իսլամական վերածննդի մասին տես՝ Kraemer, Joel L., 1992:

⁷ “Iranian Intermezzo” տերմինը գիտական շրջանակներում օգտագործվում է 821- 1055 թթ. ընկած ժամանակահատվածի համար, երբ իրանական մի քանի դինաստիաներ, Աբբասյան խալիֆայության գերակայությունն ընդունելով հանդերձ, ունեին անկախ գործելու որոշակի հնարավորություններ: Այս մասին տես՝ Minorsky V., 1957, pp. 110-16.

⁸ Բուխների շրջանի մասին՝ Encyclopaedia of Islam 2, 1986, pp 1350-1357; Mottahedeh, R., 2001, Kraemer, Joel L., 1992; Donohue, John J., 2003:

ալ-Բալադայի՝ որպես շիայական կարևոր աղբյուրի ուսումնասիրության համար:

Հոդվածում քննարկվում է Նահջ ալ-Բալադան որպես աղբյուր ոչ միայն իսլամի ծագման, Մուհամմադ մարգարեի կենդանության շրջանի, ինչպես նաև մահվանը հաջորդած առաջին ուղղահավաստ խալիֆների շրջանի շիայականության առաջին Իմամ Ալի իբն Աբի Տալիբի մոտեցումների և ընկալումների համատեքստում, այլև որպես գրի առնման՝ 10-րդ դարի Բուիհների ժամանակաշրջանի իրողությունների վերհանման համար: Ուսումնասիրության ժամանակաշրջանի երկարատևությունը հանգեցնում է տարբեր ժամանակաշրջանների սոցիալ-քաղաքական, մշակութային և հատկապես կրոնական փոփոխությունների ներկայացման անհրաժեշտությանը և այն բոլոր հարցադրումների վերհանմանը, որոնք առաջանում են Նահջ ալ-Բալադան՝ որպես կրոնագաղափարական հիմքերի աղբյուր ուսումնասիրելու համատեքստում:

Ալի իբն Աբի Տալիբի խոսքերը լավ հասկանալու համար կարևոր է ուսումնասիրել պատմական, կրոնական, մշակութային և քաղաքական իրադրությունները, որոնցից էլ սնվում են և ծագում են նրա ճառերը, նամակները և խոսքերը, և միևնույն ժամանակ դրանք էլ լույս են փռում սովյալ ժամանակաշրջանի իրադարձությունների վրա:

Ալի իբն Աբի Տալիբը ծնվել է մոտավորապես 600 թ. Մեքքայում: Ալիի հայրը՝ Աբու Տալիբ իբն Աբդ ալ-Մուտալիբ իբն Հաշիմը, ամենահայտնի և ազդեցիկ ցեղերից մեկի՝ Կուրեյշ ցեղի Բանու Հաշիմ տոհմի առաջնորդն էր: Նա իր եղբոր որդուն՝ Մուհամմադին, իսլամի ապագա մարգարեին, հոր և պապի մահից հետո իր խնամքի տակ է վերցնում, իսկ հետագայում Մուհամմադ մարգարեն ինքն է իր անմիջական խնամքի տակ վերցնում Ալիին և մեծացնում է նրան որդու պես: Ըստ միջնադարյան ավանդույթի՝ Ալին առաջին տղամարդն է⁹, և երկրորդը՝ Մուհամմադի կնոջից՝ Իսադիջայից հետո, որ ընդունեց իսլամ: Պատմական աղբյուրներում բազմաթիվ են այն պատմությունները, որոնք ցույց են տալիս Ալիի և Մուհամմադի մտերմությունը¹⁰, Ալիի՝ որպես իսլամի տարածման գործում առաջամարտիկ լինելը, միևնույն ժամանակ նրա աստվածապաշտությունը և արդարացիությունը, բազմաթիվ ռազմական

⁹ Ըստ ավանդության՝ Ալին եղել է ինը տարեկան երեխա, երբ ընդունել է իսլամ, իսկ առաջին իսլամ ընդունած հասուն տղամարդը Աբու Բաքրն է համարվում:

¹⁰ Ըստ շիայական ավանդույթի, երբ 622 թ. Մեքքայից Մադինա կատարած Հիջրայից հետո յուրաքանչյուր *մոհաջիդին* (տեղափոխված) մեկ *անսար* (օգնական) էր ընտրում, Մուհամմադ մարգարեն որպես իր օգնական՝ անսար նշում է Ալիին:

գործողություններում հանուն իսլամի և Մուհամմադ մարգարեի արված հերոսություններն ու սխարանքները:

Ալին նաև Մուհամմադ մարգարեի գրչակներից է եղել, և ըստ ավանդույթի, նրան է պատկանում նաև 628 թ. մուսուլմանների և Մեքքայի հեթանոսների միջև կնքված ալ-Հուդեյբիայի հաշտության պայմանագիրը: Թե՛ շիայական, և թե՛ սուննիական շրջանակների հեղինակների կողմից բազմաթիվ վկայություններ կան Ալիին՝ որպես հռետորության վարպետ ներկայացնող¹¹, չափածո արձակ տեքստով սաջ՝ոլ, առանց նախապես պատրաստվելու խոսելու հնարավորությունների մասին¹²:

Ծիա մուսուլմանները իմամ Ալի իբն Աբի Տալիբին ընդունում են որպես Մուհամմադ մարգարեի անմիջական ժառանգորդ և առաջին իմամ շիայական համայնքի համար: Գերագույն իշխանության հարցը հիմնական և կարևորագույն խնդիրն էր մուսուլմանական համայնքի՝ *ուլմայի* միասնականության խաթարման համատեքստում: Իմամությունը իմամ Ալի իբն Աբի Տալիբի գլխավորությամբ իմամների կողմից մուսուլմանական համայնքի կառավարման իրավունքն է Մուհամմադ մարգարեի մահից հետո, որն էլ շիայական ավանդույթի կարևորագույն տարբերությունն է սուննիականից¹³: Ըստ շիայական ավանդույթի և նաև որոշ սուննիական աղբյուրների¹⁴ Մեքքա կատարած վերջին ուխտագնացության ժամանակ Մուհամմադ մարգարեն Ղադիր ալ-Խում Կոչված վայրում բոլոր հավաքվածների մոտ ասում է հետևյալը. «Ես ինձնից հետո թողնում եմ *սակայեյն* (երկու ծանրակշիռ բան)», և այն հարցին ի պատասխան, թե որո՞նք են դրանք, նա ասում է. «Մեկը Ղուրանն է, մյուսը՝ իմ ժառանգները, եթե չհետևեք դրանց, ապա

¹¹ Ռեզա Շահ Քազեմին իր գրքում բերում է այն օրինակը, երբ 680 թ. Քերբեյայի ճակատամարտից հետո, երբ Հուսեյն իբն Ալին և նրա 72 մտերիմները և ազգակիցները դաժանաբար կոտորվում են, Հուսեյնի քույրը և Ալիի դուստրը՝ Չեյնաբը, այնպիսի մի ճառ է ասում Քուֆայի կառավարիչ Ուբայդալլահ իբն Չիյադի առաջ, որ չնայած այն հանգամանքին, որ Չեյնաբի կողմից ճառում Քերբեյայի իրադարձության մեղադրվողների և պատասխանատուների շարքին էր դասվում հենց ինքը Ուբայդալլահը, վերջինը չի կարողանում զսպել իր հիացմունքը և, հռետորության ուժին չդիմանալով, գովում է նրան ասելով՝ «Նա խոսում է այնպիսի չափածո արձակով, ինչպես որ անում էր նրա հայրը»: Մանրամասն տես՝ Reza Shah-Kazemi, 2006, էջ 2-3:

¹² Ալ-Մասուդին (մահ 956 թ.) իր *Մուրուջ սլ-Չահաբ* աշխատության մեջ նշում է. «Մարդիկ այն ինչ անգիր են հիշում Ալիի ճառերից հաշվվում է 482, որոնք նա ասել է առանց նախապատրաստվելու...»:

¹³ Ի տարբերություն սուննիական շահադայի՝ «Չկա աստվածություն Ալլահից բացի և Մուհամմադն է նրա մարգարեն», շիայականում ավելանում է «...և Ալին է նրա *ուսլին* (ընկեր/աջակից/պահապան/ժառանգորդ)»:

¹⁴ Ղադիր ալ-Խումի հադիսը թե՛ սուննիական, և թե՛ հատկապես շիայական հադիսների ժողովածուներում կա, սակայն տարբեր մեկնաբանություններով:

կանհետանաք» և բարձրացնելով Ալիի ձեռքը ասում է. «Ալլահը իմ տերն է, իսկ ես նրա ծառան: Ում տերը, որ ես եմ, տեր է նաև Ալին»: Փաստորեն շիայական համայնքի համար Մուհամմադ մարգարեից հետո կարևորագույն հեղինակությունը իմամ Ալին էր և նրա գլխավորությամբ «Աիլ ալ-Բեյթը» (Մարգարեի «ընտանիքի մարդիկ»)՝ նրա ժառանգորդները, որոնք էլ ստանում են աստվածային իրավունք Դուրանի և աստվածաբանական հարցերի մեկնաբանություն իրականացնելու համար:

Նա քսաներեք տարեկան էր, երբ Մեքքայից ուխտագնացություն կատարվեց Մադինա, որտեղ էլ Ալին ամուսնանում է Մուհամմադի ամենակրտսեր դստեր՝ Ֆաթիմայի հետ և չորս երեխա է ունենում նրանից՝ ալ-Հասան, ալ-Հուսեյն, Չեյնաբ և Ումմ Զուլսում: Մուհամմադի սերունդները շարունակվում են Ալիի երկու որդիների ժառանգության գծով, որը և շիայական իմամության ուսմունքի համար դառնում է կարևոր անկյունաքար: Նա երեսուներեք տարեկան էր, երբ մահանում է Մուհամմադ մարգարեն:

Ալի իբն Աբի Տալիբի կյանքը երեք փուլի է բաժանվում՝ ա) ծնունդից մինչև Մուհամմադի մահը՝ 632 թ., բ) մինչև խալիֆ Օսմանի մահը՝ 656 թ., գ) չորրորդ ուղղահավատ խալիֆ ընտրվելուց մինչև մահը (656-661 թթ.)¹⁵: Համարվում է, որ Ալիի գրի առնված ճառերի, խոսքերի, նամակների մեծ մասը նրա խալիֆ եղած չորս տարիներին է պատկանում:

Ալին սուննիական ավանդույթում նույնպես կարևորագույն դերակատարություն ունի, քանի որ Մուհամմադ մարգարեի սիրելի զինակիցներից էր և ուղղահավատ չորրորդ խալիֆը: Մի հանգամանք, ինչն Ալիի կերպարի շուրջ ստեղծում է հակասականությունների և տարակարծությունների հնարավորություններ իսլամական համայնքի երկու՝ սուննիական և շիայական ավանդույթների ձևավորման և զարգացման ընթացքում: Սուննիները ամբողջությամբ չեն կարող հերքել նրա դերակատարությունը և արժեքը, իսկ շիաները սուննիական իսլամից իրենց կարևորագույն տարբերությունը՝ իմամականությունը հանգեցնում են առաջին իմամ Ալիին, նրա գործունեությանը և նրա ժառանգներին:

Իմամ Ալին, որպես շիայական կրոնափիլիսոփայական և դավանաբանական համակարգում իմամության գաղափարի ձևավորման «նախահայր» թե՛ կենդանության օրոք, թե՛ նրա մահից հետո շիայական համայնքի համար հոգևոր և դավանաբանական տեսանկյուններից կենտրոնական դերակատարություն ունի:

¹⁵ Dictionary of Literary Biography, 2005, pp. 68-76, Encyclopaedia Iranica, online, available at: <http://www.iranicaonline.org/articles/ali-b-abi-taleb> (մուսք՝ 12.10.19):

Այիի դերակատարությունն իսլամի ծագման հենց սկզբից էլ հասկանալի էր դարձնում հետաքրքրությունը և ուշադրությունը նրա խոսքերի, ճառերի, ուսմունքների և իմաստությունների նկատմամբ, որոնք էլ դարերի ընթացքում ջանասիրաբար հավաքվել, մեջբերվել, ուսումնասիրվել են, միևնույն ժամանակ դրանք ժողովածուների են վերածվել, ընտրանիներ են կազմվել և մեկնաբանվել¹⁶:

Փաստորեն, շիաների համար Նահջ ալ-Բալադան կարևորագույն, ամենաշատ հղվող և ամենից հեղինակավոր գիրքն է համարվում Ղուրանից հետո, քանի որ այն պատկանում է շիաների համար մուսուլմանական համայնքի առաջնորդման տեսանկյունից աստվածային ընտրությանը/նախաինամությանը (*մասնումու*) մարգարեի իրավահաջորդ և մեղքերից զուրկ (*մաս'ում*) համարվող առաջին իմամ Այի իբն Աբի Տալիբին: Նահջ ալ-Բալադան, փաստորեն, ժամանակագրորեն առաջին օրինակն է իմամների միջոցով և նրանց կողմից աստվածաբանական խնդիրների քննարկման և մեկնաբանման տեսանկյունից:

Նահջ ալ-Բալադայի ուսումնասիրության շրջանակներում քննարկման և հարցադրումների ենթակա թեմաների ներկայանակը կարելի է հետևյալ բաժանման ենթարկել՝

- Հեղինակության հարցադրումներ՝ ալ-Շարիֆ ալ-Ռադիև՝ որպես հեղինակ-հավաքագրող, թե՛ հեղինակ. կասկածներ ալ-Շարիֆ ալ-Ռադիի՝ որպես հեղինակ-հավաքագրող լինելու շուրջ, ինչպես նաև նրա եղբոր՝ ալ-Շարիֆ ալ-Մուրթադային վերագրումներ, խմբային հեղինակության հարց և այլն:

- Այս հեղինակային հարցադրումներին զուգահեռ առաջ է գալիս «տեքստի» ժամանակագրության հարցը.

ա) Այի իբն Աբի Տալիբին պատկանող աղբյուր,

բ) իմամական համայնքի կողմից բանավորից գրավորի անցման ճանապարհին հավաքագրված (աբեռացիաների¹⁷ ենթարկված) տեքստ,

գ) իմամական համայնքի համար կարևոր մի փուլի՝ Բուխների ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական, պատմական, մշակութային, և հատկապես կրոնական իրողություններն արտացոլող հուշարձան:

- Արաբական գրական ավանդույթում ինչպես նաև պատմամշակութային միջավայրում արաբական չափաժող արձակի՝ սաջի

¹⁶ Նահջ ալ-բալադայի աղբյուրագիտական կարևորագույն աշխատություններից են `Abd al-Zahrā Husaynī al-Khafīb, 1988, և Abd Allah Ni`mah, 1972 և այլ բազմաթիվ բազմահատոր մեկնաբանություններ:

¹⁷ Աբեռացիայի սկզբունքը ոչ թե խեղաթյուրման սկզբունքն է, այլ տվյալ ինֆորմացիայի աղավաղման հնարավորությունների բացառումը տվյալ բանավոր ավանդույթի համակարգի ներսում:

դերակատարությունը և զարգացումը վաղ իսլամական շրջանում: Ի՞նչ ազդեցություն է գործել ջախիլիական շրջանի պոեզիան և արձակը վաղ իսլամի քարոզողների՝ սկսած Մուհամմադ մարգարեից և իր հաջորդների կողմից օգտագործված բանավոր հռետորական գիտելիքի փոխանցման վրա, որպեսզի տվյալ ժամանակաշրջանի մարդկանց համար նոր բովանդակության հետ մեկտեղ նոր ոճային առանձնահատկություններով շատ խորթ չլինեին:

- Երեք բաժինների ժանրային առանձնահատկությունների քննարկումը:

- Ուղղահավատ խալիֆների կողմից խուտբայի՝ ճառերի և քարոզների օգտագործումը՝ որպես տվյալ ժամանակահատվածում կրոնաքաղաքական հարցերի և կառավարման համար կարևորագույն միջոցի օգտագործում:

- Իմաստուն խոսքերը և ասույթները որպես ֆոլկլորային միավորներ դիտարկելու և քննարկելու հարցը:

- Իլմ ալ-բալադայի (*ilm al- balāḡā*) (համարվում է, որ այն ի սկզբանե առաջացել է որպես իսլամական գիտության ճյուղ, որը Ղուրանի աստվածաբանական մեկնությանը սպասարկելուն էր միտված)¹⁸ և իլմ ալ-խատաիբայի (*ilm al-khataiba*) (*the science of discourse, անմիջականորեն առնչվում է հունական փիլիսոփայության հետ*) առանձնահատկությունները, դրանց միմյանց մեջ ներթափանցումները և տարանջատման սկզբունքներն ու ժամանակագրությունը: Սակայն պետք չի նաև մոռանալ որ արաբական հռետորությունը՝ ճարտասանությունը հասարակության/մարդկանց առջև հրապարակային ելույթի, ճառի, արտասանության գիտություն էր: Կարևոր է նաև հստակեցնել, թե այս աշխատությունը որքանով և ինչպես է պատկանում ուլում ալ-դինին և/կամ ուլում ալ-ադաբին:

- Բանավոր մշակույթից գրավորի անցման ուղին վաղ իսլամական շրջանից մինչև Բաղդադյան շրջան:

- Մունիական կրոնաիրավական դպրոցների՝ մազհաբների ձևավորմանը զուգընթաց¹⁹ այլ ճանապարհ էր անցնում շիայական կրոնաիրավական «դպրոցի» կայացումն ու ձևավորումը՝ սեփական

¹⁸ Հռետորության արվեստը ուսումնասիրող հեղինակները հիմնականում իսլամի պատմության «ոսկե» դարաշրջանին էին հառում իրենց հայացքները, և Մուհամմադ մարգարեի, նրա զինակիցների, չորս ուղղահավատ խալիֆների և այլ հայտնի քարոզիչների և հռետորների տեքստերն էին բերում որպես օրինակներ և վերլուծում դրանք: Իլմ ալ-բալադայի և իլմ ալ-խատաիբայի մասին մանրամասն տե՛ս՝ Halden, Ph., 2005. pp. 19-36.

¹⁹ Մունիական կրոնաիրավական դպրոցների ձևավորման փուլում ահլ ալ-հադիս և ահլ ալ-ճաի կամ ասհաբ ալ-ճաի, ասհաբ ալ-բալամի, ասհաբ ալ-նազառի միջև պայքարի մասին մանրամասն տե՛ս՝ Makdisi G., 1979, pp.1-8.

առանձնահատկություններով: Իմամական ավանդույթը՝ իմամների խոսքերը, ելույթները, աստվածաբանական մեկնություններն են, որոնք կազմում են այն հիմքը, որից էլ ձևավորվում են տասներկուական իմամների ուսմունքներն ու ծիսակարգերը: Այս ավանդույթի ձևավորման նախապարհին ստեղծվում են շիայական հիմնական ախբարների հավաքածուները՝ «Չորս գրքերը» (al-Kutub al-'Arba'ah). Արու Չաֆար Մուհամմադ իբն Յակուբ իբն Իսհակ ալ-Բուլայնի ալ-Ռազիի al-Kāfi (թարգմ. «Ամբողջականը»), Իբն Բաբաուայի ալ-Սադուկի Man Lā Yahduruhū al-Faqrīh (Նրա համար, ով աստվածաբան-իրավագետ չունի իր կյանքում), և Արու Չաֆար Մուհամմադ իբն Հասան Տուսիի (հայտնի է որպես շեյխ ալ-Տուսի, շեյխ ալ-Տաիֆա) երկու գրքերը՝ Tahdhīb al-ahkām (թարգմ. Որոշումների հաստատում), Al-Istibṣār (թարգմ. հասկանալու, տեսնելու, ներթափանցելու ջանքն ու ձգտումը), որոնք ներառում էին իմամների և մասնավորապես 5-րդ իմամ Մուհամմադ ալ-Բակիի (մահ. 734 թ.) և 6-րդ իմամ Չաֆար ալ-Սադիկի (մահ. 765 թ.) աստվածաբանական և դավանաբանական ժառանգությունը: Հետաքրքրական է, որ ալ-Բաֆիի հեղինակ ալ-Բուլայնին, մեկ կարևոր սկզբունք էր նշում ճշմարտացիության ստուգման չափանիշի համար. «Այն բոլոր հաղիսները, որոնք համահունչ են Աստծո գրքի՝ Դուրանի հետ, ընդունի՛ր դրանք, որոնք՝ ոչ, մերժի՛ր դրանք»²⁰:

- Մինչև վերջին 12-րդ իմամի թաքուցումը ավանդույթի մեկնաբանման կենդանի հեղինակությունների իմամների կենդանության պայմաններում շիայական ուսմունքը սուննիականի օրինակով կարիք չուներ գործիքակազմ ձևավորելու ավանդույթի պահպանման համար: Մինչև թաքուցման շրջանները՝ մինչ Բուխների ժամանակաշրջանի ստեղծագործություններում շիաների կողմից իրենց ավանդույթի «ճշմարտության» սահմանման անհրաժեշտությունը չէր գիտակցվում, քանի որ կենդանի իմամներն էին համարվում այդ աղբյուրը:

- Նահջ ալ-Բալադայում խնադի²¹ բացակայության խնդիրը և դրա՝ սուննիական և շիայական մեկնաբանությունները:

Կարևոր է նշել, որ հեղինակության շուրջ կասկածներն առաջինն ի հայտ են գալիս միջնադարյան սուննիական հեղինակների շրջանում²², որոնք վերոնշյալ մի շարք հարցադրումներով էլ կասկածի տակ էին առնում Ալի իբն Աբի Տալիբին պատկանելության հարցը: Կասկածները,

²⁰ Gleave, R., Keremli, E. 2001, p 39.

²¹ Իսնադը՝ ավանդույթի հեղինակավոր/հավաստի համարվող փոխանցողների «չընդհատվող» շղթան, միջնադարյան սուննի գիտնականների համար ամենակարևոր և միակ գործիքն էր, որով նրանք չափում էին վաղ շրջանի ավանդույթի հավաստիությունը:

²² Միջնադարյան սուննի գիտնականների շրջանում Նահջ ալ-բալադայի «հեղինակային» հավաստիության և կասկածների մասին մանրամասն տե՛ս՝ Մկրտչյան Ս., 2014, էջ. 160-182:

որոնք սուննիական շրջանակներում սկիզբ են առնում Նահջ ալ-Բալադայի հավաքագրումից երկու դար հետո՝ ԺԳ դարի հայտնի կենսագիր Իբն Խալիկանի (1211-1282 թթ.) կողմից²³, և հետագայում Իբն Թայմիյան Նահջ ալ-Բալադան որպես կեղծ բովանդակություն է ներկայացնում, հատկապես նշելով իսնադի բացակայության հանգամանքը²⁴: Սրանով Իբն Թայմիյան ընդհանուր առմամբ կասկածի տակ էր առնում նաև առանց իսնադի ստեղծված պատմական և այլ նշանակության ավանդույթ՝ հարվածելով շիայական ռաջիոնալիստական շրջանակներում ստեղծած հարուստ ժառանգության հեղինակությանն ու հավաստիությանը:

Նահջ ալ-Բալադայի գրի առնման ժամանակաշրջանում գրադարանների մեծաթվությունը և հարուստ հնարավորությունները կարևոր դերակատարություն են ունեցել այդ ժամանակաշրջանի գրական գործունեության համատեքստում: Ինչպես նշում է Ադամ Մեցն իր «Մուսուլմանական վերածնունդ» գրքում «յուրաքանչյուր քիչ թե շատ նշանավոր մզկիթ ուներ գրադարան, քանի որ կար գրքերն այդ գրադարաններին ժառանգություն թողնելու ավանդույթ»²⁵: Ավելին, մզկիթներում ուսուցման գործընթացը, թելադրվող նյութի գրավոր տարբերակի վերածումը, արդյունքում տարբեր ուսուցիչներից իջազանների²⁶ ստացումը պայմանավորում էր տվյալ մարդու հետագա ճակատագիրը՝ ֆակիհ, կադի, քաթիբ լինելու հնարավորությունը: Բադադում, որտեղ ապրում էր ալ-Շարիֆ ալ-Ռադիև գոյություն ունեին հազարավոր աղյուրներ գրադարաններում, որոնցից կարող էր հանգիստ օգտվել Նահջ ալ-Բալադայի հեղինակ-հավաքագրողը: Ըստ որոշ պատմաբանների՝ ալ-Ռադիի ստեղծած Դար ալ-իլմը, որը հետագայում նրա եղբայրն էր դեկավարում, ուներ մոտ 80000 գիրք: 991 թ. Աբու Նասր Շափուր իբն Արդաշիրի կողմից (մահ 1025 թ.) հիմնված Բեյթ ալ-հիքման, հասարակական գրադարանը, որն ուներ տաս հազարից ավելի տարբեր լեզուներով գրականություն, աստիճանաբար վերածվում էր Բադադի ամենահարուստ գրադարաններից մեկը: Մեկ այլ գրադարան՝ Դար ալ-հիքման, որը հիմնվել էր Աբբասյանների օրոք Հարուն ալ-Ռաշիդի (786-809) կողմից և հետագայում ավելի ուշ շրջանի խալիֆների կողմից ավելի է հարստացվել, պարունակում էր մեծ քանակով արաբերեն գրքեր և թարգմանություններ տարբեր լեզուներից: Եգիպտոսի հասարակական

²³ Ibn Halikān, 1/423:

²⁴ Ibn Taymiyyah (d. 1327), 4/24:

²⁵ Meir A., 1973, стр. 148.

²⁶ Իջազան՝ արաբերենից թույլտվություն, լիցենզիա, որը տրվում էր ուսուցից աշակերտին հետագա գիտական գործունեություն իրականացնելու իրավունք ունենալու տեսանկյունից: Makdisi, G, 1981, pp. 271-273.

գրադարաններից՝ *Խիզանայթ ալ-քուշուքը*, որը հիմնվել էր Ֆարթիմյանների երկրորդ խալիֆ ալ-Ազիզ Բիլլահի կողմից ուներ 1600000 գիրք: Հարուստ գրականություն կար (400000 գիրք, թեմատիկ կատալոգներով) նաև Կորդոբայի Հաքիմ իբն Նասիրի (960-977) կողմից հիմնադրված գրադարանում: Այս ամենն ուղեկցվում էր նաև առանձին գիտնականների մասնավոր հավաքածուներով:

Հայտնի է, որ հին արաբական հասարակական գործունեությանը հասուկ էր կոլեկտիվ հիշողության մեջ նախորդ սերունդներից ժառանգած նախնիների իմաստության և փորձի մասին հստակ ու մանրակրկիտ ինֆորմացիայի պահպանումը և փոխանցումը, որն էլ հիմնվում էր բանավոր փոխանցման համակարգի վրա՝ հիմքում կրելով երկար տարիների ընթացքում մշակված ընտրության, պահպանման և տվյալ ինֆորմացիայի աղավաղման հնարավորությունների բացառումը տվյալ համակարգի ներսում²⁷:

Այն բոլոր հեղինակները, որոնք իրենց առջև խնդիր են դրել պատմական տարբեր աղբյուրներում Նահջ ալ-Բալադայի տեքստի աղբյուրագիտական հենքը ապացուցել, իրականացրել են այդ աշխատանքը հենվելով ալ-Շարիֆ ալ-Ռադիի կողմից հիշատակված աղբյուրների, նրա ժամանակակիցների և Նահջ ալ-Բալադայի գրավոր ձևակերպմանը նախորդած ավելի վաղ շրջանի աղբյուրների հիման վրա: Իսկ ավելի ուշ շրջանի աղբյուրները, որոնք պարունակում են Ալի իբն Աբի Տալիբի ասույթները, ճառերը կամ նամակները նույնպես մեծ կարևորություն են ներկայացնում, հատկապես Նահջ ալ-Բալադայի կասկածելի հատվածների քննարկման նպատակով: Նահջ ալ-Բալադայի ավելի վաղ աղբյուրներում «բովանդակության» ճշգրտումը, դրանց առկայությունը մուսուլմանական միջնադարյան պատմագիրների և կենսագիրների աշխատություններում առանձին ուսումնասիրության թեմա է, ինչը ժամանակակից որոշ գիտնականներ փորձել են իրականացնել հողվածների, ատենախոսությունների տեքստով հենվելով միջնադարյան և ավելի ուշ շրջանի հեղինակների՝ Նահջ ալ-Բալադայի մեկնության և աղբյուրագիտական աշխատանքների վրա²⁸: Աղբյուրների բազմաթվությունը և բազմատեսակությունը հնարավորություն չի տալիս հողվածի շրջանակներում անդրադառնալ դրանց, որը նաև տվյալ դեպքում մեր ուսումնասիրության բուն խնդիրը չէ:

Աղբյուրագիտական հենքով հետազոտողների աշխատանքներից մեզ համար հետաքրքրական է այն, որ Ալի իբն Աբի Տալիբին պատկանող նյութը գրի է առնվել վաղ շրջանից: Վաղ շրջանում գրի առնվածի որոշակի

²⁷ Оганесян Д., 2008, стр. 209-210.

²⁸ Zavieh, Mohammad Ghasemi 1994, Waris Hassan, Syed M. 1979, pp. 100-149.

հատված առկա է Նահջ ալ-Բալադայում: Տարբեր աղբյուրներում հիշատակված Ալիին պատկանող ասույթներն ու խոսքերը պարտադիր չէ, որ առկա լինեն Նահջ ալ-Բալադայում ամբողջությամբ, ինչն ինքնին հասկանալի է, քանի որ ալ-Շարիֆ ալ-Ռադիին ինքն էլ իր նախաբանում նշում է, որ չի հավակնում հավաքել Ալի իբն Աբի Տալիբին պատկանող ողջ նյութը: Ալ-Շարիֆ ալ-Ռադիին Նահջ ալ-Բալադան հավաքագրելով նպատակ ուներ պահպանել իմամ Ալիի կողմից թողնված «ժառանգությունը», սակայն հաշվի առնելով դրանց ժանրային ուղղվածությունները փորձել է իր կողմից ավելացնել ևս մեկ սկզբունք, այն է՝ ներառել ճարտասանության տեսանկյունից լավագույնները մեկ ամբողջական ժողովածուի մեջ²⁹:

Մեր ուսումնասիրության ընթացքում, ելնելով այն դրույթից, որ յուրաքանչյուր շրջանում գրառված տեքստը նախ տվյալ ժամանակաշրջանի պահանջները բավարարող և հարցերին պատասխանող տեքստ է, միևնույն ժամանակ այն իր վրա կրում է նախկին ավանդույթի բովանդակային և ձևային առանձնահատկությունները և ազդեցությունները: Տեքստն ինքնին տվյալ ժամանակաշրջանի պատմամշակութային միջավայրի արգասիքն է, սակայն իր հիմքում կրում է «ավանդույթը», որն էլ յուրաքանչյուր խմբավորման կամ գաղափարական ուղղվածության համայնքի համար իր առանձնահատկություններն ու աղբյուրներն ուներ:

Ալիի խոսքերի միջոցով նպատակ է եղել հիշեցնել մարդկանց Ալիի՝ իսլամի պատմության մեջ ունեցած դերակատարության, նրա իրավունքների՝ որպես *Ուսլի՝ ընկեր և պահապան*, և իր տոհմաձառի՝ Մուհամմադ մարգարեի ընտանիքին՝ *սահ ալ-բեյթին* պատկանելության հարցը, այստեղից էլ խալիֆայության նկատմամբ նրանց իրավունքների մասին: Միևնույն ժամանակ ալ-Շարիֆ ալ-Ռադիին և իր ընտանիքը պատմության մեջ առաջին անգամ սկսում են այնպիսի պաշտոններ զբաղեցնել, որը մինչ այդ որևէ շիա իմամական մուսուլման չէր կարող ակնկալել³⁰: Անհրաժեշտ է նշել, որ Շարիֆների³¹ ընտանիքը յոթերորդ

²⁹ Հավաքագրման շուրջ առավել մանրամասն՝ Մկրտչյան, Ս., 2016, էջեր՝ 50-65:

³⁰ Հայտնի է, որ Մուխիզ ալ-Դաուլան ալիական ընտանիքի արտոնյալությունը կամ քաղաքական միավորի առանձնահատկությունը ամրապնդելու համար նրանց իրավական հարցերի պատասխանատվությունը և վերահսկողությունը վերցնում է Աբբասյան նախիբի ձեռքից և այն հանձնում առանձին հատուկ ալիականների հարցերով զբաղվող նախիբին. այս պաշտոնը հինգ անգամ զբաղեցնում է ալ-Շարիֆ եղբայրների հայրը, իսկ հետագայում նաև որդիները: Ալ-Շարիֆ ալ-Ռադիի կենսագրական մանրամասների և նրան պատկանող տիտղոսների մասին տե՛ս՝ Akhtar S.W., 1988, pp. 123-76.

³¹ Ի դեպ շարիֆ անվանում էին նրանց, ովքեր և՛ հոր, և՛ մոր կողմից Մուհամմադ Մարգարեի ժառանգորդներ էին համարվում:

իմամ Մուսա ալ-Քազիմից սերող ալիական ժառանգներ էին: Հայրը՝ Աբու Ահմադ ալ-Հուսեյն իբն Մուսան (մահ 1009 թ.) թե՛ կրոնական, թե՛ հասարակական առումով բարձր դիրք էր գրավում և մի շարք պաշտոններ զբաղեցնում, որոնք նաև հետագայում անցնում են իր որդիներին՝ ավագ որդի ալ-Շարիֆ ալ-Մուրթադային և նրա կրտսեր եղբայր ալ-Շարիֆ ալ-Ռադիին, որոնք թե՛ կրոնական, և թե՛ գրական առումով կարևոր դերակատարություն են ունեցել շիայական կրոնափոխության և դավանաբանական մտքի ձևավորման, ժառանգության պահպանման և փոխանցման գործում³²: Հետագա սերունդներին Ալիի կրոնական, քաղաքական, հասարակական աշխարհընկալման և արժեքային աշխարհայացքի ներկայացումը տվյալ ժամանակի հրամայականներից էր և ալ-Շարիֆ ալ-Ռադիին, հաշվի առնելով նաև իրենց քաղաքական, դավանաբանական և նաև անձնական նկատառումները կարևորել է այդ ժառանգության պահպանումը, տվյալ փուլում ամրագրումը և հետագա սերունդներին փոխանցումը:

Ալ-Շարիֆ ալ-Ռադիի կենսագործունեության շրջանում շիա իսլամի իսնաաշարիական-իմամական ուղղության ձևավորման առանձնահատկությունների և տվյալ ժամանակաշրջանի մարտահրավերների վերհանումը կարևոր է ներկայացնել սուննիական կրոնախրավական դպրոցների՝ մագհաբների ձևավորմանը գուզրնթաց: Ընդհանրապես շիայական յուրաքանչյուր խմբավորման զագացումը աստվածաբանության, նարատիվի և պատմության շրջադարձերի անընդհատ բանավեճի հետևանք է: Մինևույն ժամանակ յուրաքանչյուր խումբ անընդհատ երկխոսության մեջ է (թե՛ թշնամական, թե՛ համագործակցային) սուննիական տարբեր ուղղությունների հետ հակասությունների և առանձնահատկությունների վերհանման միջոցով:

Բուիների շրջանում տեղի ունեցած քաղաքական և սոցիալական փոփոխությունները մեծ ազդեցություն ունեցան իմամական գրականության վրա, մինևույն ժամանակ նաև իմամական դուրանական մեկնաբանության վրա:

Ղուրանական մեկնաբանության շիայական մոտեցումները որոշակիորեն տարբերվում էին սուննիականից այնպես, որ ավելի բարձր էին դասում շիայական մեկնությունը³³: Ըստ շիայական ավանդույթի՝ Ալին և նրա ժառանգները՝ իմամները ունեին Ղուրանի մեկնաբանության իրավունքը: Ծիաներին էր ի վերուստ տրված Ղուրանը ճշմարիտ հասկանալու իրավունքը: Նրանք համարում էին, որ եթե սուննիները

³² Կարևոր է այստեղ հիշատակել, որ շիայական չորս ախբարների ժողովածուների կազմողները աշակերտել են նաև ալ-Շարիֆ եղբայրների մոտ:

³³ Akhtar S.W., 1988, p81:

մեկնաբանման կարիք ունեն, ապա շիաները՝ մեկնաբանման իրավունք: Նրանց է տրված Ղուրանի ներքին՝ *քառին* իմաստների մեկնաբանման իրավունքը: Այստեղ հարկ է հիշատակել շիայականության աստվածաբանական հարցերի մեկնության և բացատրության *թաֆսիրից* տարբերվող *թա՛ուհի* կիրառումը: Տվյալ ժամանակաշրջանի տարբեր կրոնաքաղաքական խմբավորումների բանավեճերի արդյունքում շիայական աստվածաբանությանը՝ *քալամին* հատուկ մտազործունեության, դատողության ձևը՝ *թա՛ուհլը*, հիմնված էր Ղուրանի խորհրդապատշտական-ալեգորիկ մեկնության վրա, որը բացառում էր այս կամ այն հեղինակության վրա հիմնվելու երևույթը փաստարկման ընթացքում, բացի մտքից՝ *սկլից*:

Հայտնի մութագիլի Նահջ ալ-Բալադայի կարևորագույն և հսկայաձավալ մեկնաբանության հեղինակ Իբն Աբի ալ-Հադիդի (մահ. 1258թ.) «Շարի Նահջ ալ-Բալադա» (թարգմ. Նահջ ալ-Բալադայի մեկնություն/բացատրություն) աշխատությունից հետևյալ մեջբերումը նույնպես տվյալ իրավունքի ցուցիչներից է՝ «Իմամի խոսքերն արարչի խոսքերից ցածր են, բայց բարձր բոլոր արարվածներից»³⁴: Այս միտքն ընկած է շիայական կրոնափիլիսոփայական դավանաբանական հիմքում՝ իմամների խոսքերը և իմամությունը՝ որպես Մուհամմադ մարգարեի միջոցով Ալլահից ստացված ուղերձներից՝ Ղուրանից՝ Ալլահի ուղղորդած ճանապարհից հետո երկրորդ «հեղինակավոր խոսք և ճանապարհ»:

Ընդհանրապես իմամության գաղափարն ընկած է շիայական ուսմունքի կրոնազաղափարական ավանդույթի հիմքում: Իմամական ավանդույթի ձևավորման պատմության ընթացքում տեղի ունեցած տարբեր փուլերի և շրջադարձերի արդյունքում է ձևավորվել շիայական (հիմնականում՝ տասներկուական) այսօրվա համայնքը, որպես իսլամական քաղաքակրթության ժամանակակից դրսևորում և երևույթ:

Իմամական աստվածաբանությունը՝ քալամը և կրոնաիրավունքը տարբեր ազդեցությունների է ենթարկվել այս կամ այն ժամանակահատվածում գերիշխող ավանդույթների կողմից՝ տրամաբանության, դասական իսլամական փիլիսոփայության, սուֆիականության տարբեր ուղղությունների, սուննի իրավագիտության և մութագիլիական աստվածաբանության և այլնի:

Կարևոր է քննարկել նաև մինչ Բուհիների շրջանում շիայական աստվածաբանության հիմնական ուղղվածությունները, դրույթներն և սկզբունքները, որոնք էլ Բուհիների շրջանում, փաստորեն հանգեցնում են իմամության ինստիտուցիոնալ ամրապնդման անհրաժեշտությանը:

³⁴ Ibn Abī al-Hadīd, (1959-1964), p 24. Այս միտքը կարելի է հանդիպել ավելի ուշ շրջանի գրեթե բոլոր մեկնաբանների և հետազոտողների աշխատանքներում:

Պատմաքաղաքական և դոկտրինայ տեսանկյունից Բուիների դարաշրջանին նախորդել է շիայական կրոնադավանաբանական հարցերի քննարկման և ձևավորման կարևոր փուլեր՝ երբ տիրում էր շիայականության նկատմամբ թե՛ քաղաքական, և թե՛ ինտելեկտուալ թշնամական վերաբերմունք, և իմամական համայնքի համար այնպիսի մի ժամանակահատվածում, երբ «Ղայբա ալ-սուդրա» (al-Gayba al-Suğra) «փոքր թաքուցման» փուլից անցում էր կատարվելու «Ղայբա ալ-քուբրա»՝ «մեծ թաքուցմանը» (al-Gayba al-kubra)³⁵: Վաղ շիայականության մտքի զարգացումը և ուսմունքի ձևավորումը անցնում էր մի կարևոր փուլով, երբ իմամական համայնքը փորձում էր հասկանալ իր հետագա գործողություններն աստվածային գիտելիքի ժառանգորդի՝ իմամի իրական կյանքում չլինելու պայմաններում:

Շիայական աստվածաբանության մեկնաբանների աշխատանքների առանձնահատկություններն ուսումնասիրող գիտնականներից Էնդրյու Նյումենի³⁶, Բար Աշերի³⁷ կարևոր հետազոտություններում մանրամասնորեն ներկայացվում են մինչ Բուիների շրջանի աստվածաբանական մեկնության ընդհանրությունները և առանձնահատկությունները, որոնց հիման վրա էլ հետագայում ձևավորվում է «մեկնաբանման շիայական դպրոցը»: Տվյալ ժամանակահատվածի համար դպրոց տերմինի կիրառումը, սակայն չէր նշանակում, որ առանձին մեկնաբաններ պարտադիր պետք է ճանաչեին մեկը-մյուսին, կամ պետք է ծանոթ լինեին միմյանց աշխատանքներին, կամ էլ բոլորը իրենց գիտելիքը ստանային միևնույն ուսուցիչներից: Անհերքելի է, որ տվյալ ժամանակահատվածի շիայական կենտրոնների՝ Քումի, Քուֆայի, Խորասանի և հատկապես Բաղդադի ազդեցությունը մեծ է եղել հետագայում շիայական ուսմունքի ամրապնդման հարցում³⁸:

Առանց հասկանալու, թե ինչպիսի փոփոխությունների է ենթարկվում շիա իսլամը և իմամական համայնքը իմամի թաքուցման մեծ և փոքր փուլերի արդյունքում, հնարավոր չէ հասկանալ այն հարուստ գրականությունը, որը ստեղծվել է այդ ժամանակահատվածում, որում անհատ հեղինակների ձայները լսելի են դարձել:

Թաքուցումների շրջանները համընկել են Աբբասյան խալիֆայության ժամանակահատվածում Բուիների դինաստիայի իշխանության հետ:

³⁵ Թաքուցման շրջանների մասին մանրամասն տե՛ս՝ Kohlberg E., 1973, pp. 521-34, Modarressi H., 1993.

³⁶ Newman, Andrew, J., 2002:

³⁷ Bar-Asher M. M., 1993,:

³⁸ Նշենք, որ հենց այդ ժամանակաշրջաններում էլ ստեղծվում են շիայական ախբարների չորս կարևոր աղբյուրները (*ալ-քուլոթուք ալ-սուքուա*), որոնք իրենց մեջ ներառում են մեծ թվով շիայական հաղիսներ: Մանրամասների համար տե՛ս՝ Newman, Andrew, J., 2002:

Բուհների օրոք շիաներին տրված հովանավորչության և օրինականության արդյունքում, շիայական հարուստ բազմաբովանդակ գրականություն է ստեղծվում, և այս գրականության մեջ վերաբերմունքային մի շարք փոփոխություններ են վերհանվում³⁹:

Մինչ մեծ թաքուցման փուլը իմամական ուսմունքը միմյանց հակասող, երբեմն իրար մերժող տեսակետներ էր հնչեցնում: Ռ-ացիոնալիզմը կողք-կողքի գոյատևում էր ավանդույթի կողքին, որն էլ իր ձևով իմամների ավանդույթի՝ հադիսների մեջ էր գտնում իր արտահայտությունը⁴⁰:

Մեծ թաքուցումից հետո է, որ մութագիլիական այն տեսակետները, որ ռացիոնալիստական միջոցներով պետք է բացատրել աստվածաբանությունը, կիրառվում է նաև իմամականության մեջ: Նույնն էր մոտեցումը նաև մեկնության և բացատրության հարցում: Ավելի ուշ շրջանի աստվածաբանները, որոնք հիմնվում էին *Հադիս ալ-սակադեյնի* (Ḥadīth al-thaqalayn) և այլ ավանդույթների վրա, հիմնավորում էին, որ միայն իմամներն իրավունք ունեն կամ այն հեղինակություններն են, որոնք կարող են մեկնել Ղուրանը: Սակայն, դրան զուգահեռ ժամանակակից նոր մեկնաբաններ-աստվածաբանների կողմից իրենց սեփական մտքերը և տեսակետները հայտնելու ձևաչափը դառնում է գերիշխող⁴¹:

Բուհների շրջանում տեղի ունեցած քաղաքական և սոցիալական փոփոխությունները մեծ ազդեցություն ունեցան իմամական գրականության վրա, մինևնույն ժամանակ նաև իմամական դուրանական մեկնաբանության վրա:

Մինչ բուհների շրջանի իմամական շիայական էքզեգետիկայի՝ բացատրության, մեկնության առանձնահատկությունները, որպես մեկ դպրոցի-ուղղության ներկայացուցիչներ հետևյալն էին՝

- Հադիսների հիմքով մեկնաբանություն/բացատրություն
- Ղուրանի տեքստի բնորոշական մոտեցում

Իմամականությունը, ինչպես և բոլոր իսլամական ուղղությունները փորձում էին Ղուրանում գտնել իրենց սեփական ուսմունքների հիմնավորումները: Ղուրանում բացահայտ կերպով Ալլիին որպես իր հետևորդ չնշանակելու մասին հակաշիայական ակնարկներին շիա կրոնագետները փորձում էին պատասխանել երեք հարթությունում՝

-Ղուրանի ոչ ամբողջական լինելը, շիաներին առնչվող հատվածների միտումնավոր կերպով չներառելը:

³⁹ Bar-Asher M. M., 1993, էջ 78:

⁴⁰ Նույն տեղում, էջ. 79:

⁴¹ Նույն տեղում:

-Ղուրանը պարունակում է ներքին իմաստներ, որը պետք է կրոնագետը բացահայտի:

-Ղուրանը տալիս է սկզբունքները, իսկ ավանդույթն այն ամբողջացնում է կամ մանրամասնում:

- Հակասուննիական միտումներ և Մուհամմադ մարգարեի զինակիցների նկատմամբ թշնամական վերաբերմունք⁴²:

- Իմամության ինստիտուտի կայացման շուրջ եղած աստվածաբանական և այլ հարցերի նկատմամբ հետաքրքրություն:

Իմամության ինստիտուցիոնալ կայացման անհրաժեշտությունը առաջ է գալիս և ամրապնդվում հենց Բուիների շրջանում: Շեյխ ալ-Մուֆիդի, նրա աշակերտ ալ-Շարիֆ ալ-Մուրթադայի, հետագայում էլ նաև ալ-Տուսիի նման գիտնականների կողմից ազատ մտածելակերպի առկայությունը դառնում է նորմատիվային⁴³:

Համարվում է, որ 10-11-րդ դարերում գրավոր ավանդույթի ձևավորված լինելու փուլում արդեն հրաժարվում էին նախկին՝ բանավորից գրավորի անցման սկզբնական փուլում ձևավորած անհրաժեշտ կարգից՝ իսնադի՝ փոխանցողների շրջայի անհրաժեշտությունը տվյալ տեքստի որպես հավաստիությունը փաստող երաշխիքից:

Մինչ բուիների շրջանում շիաները մեղադրում էին սուննիներին Ղուրանի ոչ ամբողջական լինելու և որոշ մասերը գրի չառնելու կամ ուղղակի ոչ ճշգրիտ գրի առնելու մեջ, իսկ Բուիների շրջանում Ղուրանի Օսմանի օրոք հավաքագրված տարբերակն արդեն չէր առաջացնում այդչափ ընդդիմություն, ինչպես նաև արդեն մեղմել էին վերաբերմունքը Ղուրանի սուննի մեկնաբանների աշխատանքների նկատմամբ, քանի որ ալ-Տուսիի, ալ-Տաբարսիի աշխատանքներում արդեն կան հղումներ սուննիական մեկնաբանություններից⁴⁴:

Նահջ ալ-Բալադայում Մուհամմադ մարգարեի զինակիցների նկատմամբ եղած բացասական վերաբերմունքի⁴⁵ քննարկումը հետաքրքրական է՝ հատկապես Բուիների շրջանում շիայական մտածելակերպի շրջադարձային իրողությունները հաշվի առնելով: Ըստ Բար-Աշերի՝ շիաները Բուիների շրջանում իմամականությունն առավել ամուր հիմքերի վրա դնելու համար ոչ թե դադարեցնում են Մուհամմադ մարգարեի զինակիցներին «սևացնելու», պախարակելու քաղաքականությունը, այլ ուղղակի փորձում էին սուննիականությունից

⁴² Bar-Asher M. M., 1993, էջ 73:

⁴³ Նույն տեղում, էջ 81:

⁴⁴ Նույն տեղում, էջ 82:

⁴⁵ Ի դեպ միջնադարյան սուննի հեղինակներն այս հիմքով նույնպես բերում էին փաստարկներ, որ Նահջ ալ-բալադան չի կարող պատկանել Ալի իբն Աբի Տալիբին:

իրենց մեկուսացվածությունը հաղթահարել՝ մասնակիորեն թաքցնելով իրենց ընդդիմությունը սուննիականությանը, միևնույն ժամանակ ռազմավարական տեսանկյունից նշում էին իրենց ընդհանուր ժառանգությունը⁴⁶:

Սակայն, նույնիսկ եթե Բուխների շրջանում տեղի էր ունեցել որոշակի շրջադարձ նրա գինակիցների նկատմամբ վերաբերմունքի փոփոխության առումով, ալ-Շարիֆ ալ-Ռադիին չէր կարող հաշվի չառնել, որ Ալիի խոսքերը, լինելով շիայական ուսմունքի ձևավորման հենց հիմքերից և անցնելով երկարատև մի ժամանակաշրջան չէր կարող չկրել հակասուննիական մոտեցումներ: Հատկապես բացասական վերաբերմունքը ակնառու էր Մուհամմադ մարգարեի այն գինակիցների նկատմամբ, որոնց հետ «արդարության վերականգնման և պահպանման» պայքարի մեջ է եղել իր խալիֆայության օրոք: Բացի դա շատ կարևոր է ալ-Շարիֆ ալ-Ռադիի անձնական մոտեցումները տվյալ հարցերին. ալ-Շարիֆ ալ-Ռադիի կենսագրական հարուստ նյութի ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս վարկած առաջ քաշել, ըստ որի՝ նրա ընտանիքի անդամները, լինելով իմամ Ալիի ընտանիքից սերող ժառանգներ, չէին կարողանում համակերպվել այն հանգամանքի հետ, որ իրենք ենթարկվում են Աբբասյան խալիֆներին, այլ ոչ թե զբաղեցնում խալիֆների պաշտոնը⁴⁷:

Այսպիսով, Նահջ ալ-Բալադան՝ որպես վաղ իսլամական շրջանի և միջնադարյան պատմամշակութային, պատմագրականագիտական և կրոնագիտական աղբյուր, մեր օրերում մեծ տեղ է զբաղեցնում շիաների շրջանում և լայն իմաստով արաբամուսուլմանական մշակույթի կարևորագույն հուշարձաններից է, իսկ շիայական համայնքի համար՝ նաև Ղուրանի «ժառանգը»⁴⁸:

Նահջ ալ-Բալադան շիայական աստվածաբանական և կրոնափիլիսոփայական հասկացությունների կարևորագույն մի աղբյուր է ոչ միայն ստեղծագործության ստեղծման՝ Ալի իբն Աբի Տալիբի կենդանության շրջանի (ընդհանրապես իսլամի սկզբնավորման), այլև դրանից հետո և հատկապես հավաքագրման ժամանակաշրջանի՝ 10-11-րդ դարերի Բուխների շրջանում՝ Բաղդադյան միջավայրի պատմաքաղաքական, մշակութային, հասարակական և կրոնաքաղաքական իրադրության մեկնաբանման համար:

⁴⁶ Bar-Asher M. M., 1993, էջ. 86:

⁴⁷ Akhtar S.W., 1988, pp 177-204.

⁴⁸ Մորթեզա Մոթահարին իր «Պտույտ Նահջ ալ-բալադայով» գրքում գրում էր. «Այն շատ մոտ է Ղուրանին, այն կարծես Ղուրանի «ժառանգն» է: Murtada Mutahhari, Kindle Edition.

NAHĠ AL-BALĀĠĀ AS 10TH CENTURY SOURCE FOR SHIA ISLAMIC DOCTRINAL BASES

Tatevik Mkrtchyan

(Summary)

Nahġ al-Balāġa (lit. Way/Path/Peak of Eloquence) is a “collection of fragments of sermons and speeches, letters, homiles and maxims” attributed to the first Ithna‘ashari Imām and the fourth al-Ḥulafā’ al-Rāšidūn, Amīr al-Mū‘minīn, ‘Ali ibn Abī Tālib, (600-661) compiled by Al-Šarīf al-Raḏī (970-1015/1016) one of the prominent scholars and poets of the Būyid period (945-1055).

In the article Nahġ al-Balāġā being dated as the 7th century text is examined as source for Shia Islamic doctrinal bases for ‘Ali ibn Abī Tālib’s life, as well as the formative and oral period of Islam up until the 10th century, the compilation times of al-Raḏī. In the article the pre-Būyid and the Būyid periods of Shia doctrinal situation are revealed as well. The importance of Nahġ al-Balāġā in historiographic, cultural and religious debates of early, formative period of Islam till the 10th century Shi’a doctrinal developments and changes were discussed.

НАХДЖ АЛЬ-БАЛАГА КАК ИСТОЧНИК 10-ГО ВЕКА ДЛЯ ШИИТСКИХ ИСЛАМСКИХ ДОКТРИНАЛЬНЫХ ОСНОВ

Tatevik Mkrtchyan

(Резюме)

Нахдж аль-Балага (пер. Путь красноречия) является собранием, состоящим из 240 проповеди, 79 писем и 489 высказываний четвертого праведного халифа (656-661), повелителя правоверных (амир аль-муминин) и первого из двенадцати почитаемых шиитами имамов имама Али ибн Аби Талиба (600-661). Автором компиляции этого труда является шиитский ученый, известный литератор, поэт, богослов и филолог аль-Шариф аль-Ради (970-1015/1016).

В статье Нахдж аль-Балага рассматривается как источник шиитских исламских доктринальных основ при жизни Али ибн Аби Талиба, а также в период становления и устного периода ислама вплоть до 10-го века, время составления Нахдж аль-Балаги аль-Шарифом аль-Ради.

В статье обсуждается важность Нахдж аль-Балаги в историографических, культурных и религиозных дебатах с раннего периода формирования ислама до X века, когда происходят важные изменения в шиитской доктрине раскрывая процессы происходящие в шиитской доктрине в добуидский и буидский периоды.